Վահան Թոթովենց

Երգ մը

Երգ մը անոր, զոր կճանչնաս:

Ո՞վ կաթեց այնքան լույս քու աչքերուն խորը, ո՞վ պարգևեց քու երիտասարդ ճակատին դարերուն լրջությունը, և քու ամեն մեկ խոսքին մեջ՝ երկունքներու խորհուրդն ու խաղաղությունը: Աչքերդ տեսնողը պիտի կոչեր. «Բեկորը հսկա արեգակին»: Ճակատդ տեսնողը պիտի անվաներ քեզ կնքողը բոլոր դամբարաններուն, իսկ ան, որ քու երգը լսեր, պիտի ըսեր. «Ահա՛ ծորակը, ուրկե բոլոր քաղցրությունները կհոսին»:

Բայց ես, որ քեզ ամբողջովին կճանչնամ ճակատդ, աչքերդ, լեզուդ, հոգիդ, սիրտդ, ստինքներուդ աղավնությունը և մերկությանդ աստվածությունը, պիտի ըսեի. «Ահա՛ կույսը, ահա՛ Արշալույսներու մարմնացած շունչը»: